


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ (սպառողական շուկա)**

**ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)**

	2003թ. հունվար-դեկտեմբեր		Ընդհանուրի նկատմամբ, %	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2003թ. հունվար-դեկտեմբեր	2002թ. հունվար-դեկտեմբեր
<b>Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը</b>	<b>926913.6</b>	<b>112.9</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
<i>այդ թվում.</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	710245.8	114.5	76.6	75.1
բնակչությանը մատուցված ծառայություններ	216667.8	108.9	23.4	24.9

**ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռներն ըստ եռամսյակների, 2003. հունվար-դեկտեմբերին**

*(ընդհանուրի նկատմամբ, %)*




ՀՀ սպառողական շուկան 2003թ. հունվար-դեկտեմբերին բնութագրվել է կայուն աճի միտումով: Նույն ժամանակաշրջանում սպառողական շուկայի ընդհանուր ծավալում արձանագրվել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռի աճ՝ I եռամսյակի 73.6%-ից մինչև IV եռամսյակի 78.3%-ը:

2003թ. հունվար-դեկտեմբերին սպառողական շուկայի ծավալը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 112.9%:

Մանրածախ առևտուր

2003թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 710245.8 մլն. դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 14.5%-ով: 2003թ. դեկտեմբերին նույնների համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 176.4%:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ֆիզիկական ծավալի ինդեքսները 2003թ. 2002թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, համադրելի գներով, %



ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը


	2003թ. հունվար-դեկտեմբեր		Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռն ընդհանուրի նկատմամբ, %
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2002թ հունվար-դեկտեմբերի նկատմամբ, համադրելի գներով, %	
Ընդամենը	710245.8	114.5	100
<i>այդ թվում՝</i>			
խանութներ	372307.1	121.1	52.4
հանրային սնունդ	6751.7	115.4	1.0
սպառողական ապրանքների շուկաներ	243194.1	121.7	34.2
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	24639.5	93.0	3.5
կրպակներ	63353.4	78.8	8.9

Բնակչության սպառողական պահանջարկը գլխավորապես բավարարվել է խանութների, սպառողական ապրանքների շուկաների և կրպակների միջոցով: 2003թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալի գերակշռող մասը՝ 95.5%-ը (678854.6 մլն.դրամ), ձևավորվել է վերջիններիս միջոցով: Այս միտումը բնորոշ է հանրապետության գրեթե բոլոր մարզերին:

**Խանութների, սպառողական ապրանքների շուկաների և կրպակների միջոցով իրականացվող առևտրի տեսակարար կշիռը մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում ըստ ՀՀ մարզերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին**


	Ընդամենը ՀՀ	այդ թվում										
		ք.երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
Խանութների, սպառողական ապրանքների շուկաների և կրպակների ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	678854.6	577421.7	5742.2	7085.5	10805.5	5797.2	19925.1	27023.9	9615.1	5240.7	3880.1	6317.6
այդ թվում ընդհանուրի նկատմամբ, %	95.5	96.9	93.9	95.5	80.5	82.9	90.9	97.6	71.0	90.3	97.9	83.1

**ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ֆիզիկական ծավալի ինդեքսները 2003թ. ( ըստ ձևավորման աղբյուրների) 2002թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %**



**Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալն ըստ ձևավորման աղբյուրների, ՀՀ մարզերով, 2003թ հունվար- դեկտեմբերին**

(ընդհանուրի նկատմամբ, %)



**Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալների դինամիկան**

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-դեկտեմբերին»

**ըստ ձևավորման աղբյուրների, 2003թ. հունվար-դեկտեմբերին**

	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %				
		խանութներ	հանրային սնունդ	սպառողական ապրանքների շուկաներ	գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	կրպակներ
Հունվար	38112.4	49.6	0.9	28.8	3.5	17.2
Հունվար-փետրվար	76276.7	49.0	0.9	28.7	4.6	16.8
Հունվար-մարտ	124179.4	53.7	0.9	28.2	4.2	13.0
Հունվար-ապրիլ	173601.8	54.6	0.9	28.1	4.1	12.3
Հունվար-մայիս	224633.2	56.0	1.0	27.4	4.1	11.5
Հունվար-հունիս	278039.4	56.6	1.0	27.4	4.1	10.9
Հունվար-հուլիս	337509.5	56.5	1.2	27.6	4.0	10.7
Հունվար-օգոստոս	398658.1	56.3	1.1	28.2	4.0	10.4
Հունվար-սեպտեմբեր	460957.6	56.2	1.1	28.6	3.9	10.2
Հունվար-հոկտեմբեր	525630.2	56.4	1.1	28.7	3.8	10.0
Հունվար-նոյեմբեր	589921.0	56.1	1.1	29.3	3.7	9.8
Հունվար-դեկտեմբեր	710245.8	52.4	1.0	34.2	3.5	8.9


Ապրանքաշրջանառության ծավալի դինամիկան, ըստ ձևավորման աղբյուրների, 2003թ. հունվար-դեկտեմբերին էական փոփոխություններ չի կրել:

**ՀՀ մանրածախ առևտրի գործող օբյեկտների քանակը և ապրանքաշրջանառության ծավալներն ըստ ՀՀ մարզերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին**

	Ընդամենը		այդ թվում									
	գործող օբյեկտների քանակը, միավոր	ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	խանութներ		հանրային սնունդ		կրպակներ		գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ		սպառողական ապրանքների շուկաներ	
			քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ
ք. Երևան	5662	595801.6	2440	318753.5	520	5120.5	2671	37594.8	11	13259.4	20	221073.4
Արագածոտն	226	6114.8	102	4747.4	16	213.1	101	720.5	4	159.5	3	274.3
Արարատ	610	7419.4	396	4434.6	15	201.1	192	1220.3	3	132.8	4	1430.6
Արմավիր	425	13424.4	88	3744.8	10	134.5	322	2832.1	2	2484.4	3	4228.6
Գեղարքունիք	428	6992.5	209	2745.2	12	60.2	196	1239.6	3	1135.1	8	1812.4
Լոռի	1073	21910.3	285	9373.3	28	142.4	752	4889.1	4	1842.8	4	5662.7
Կոտայք	1286	27684.2	332	15802.4	25	417.5	915	7541.1	4	242.8	10	3680.4
Շիրակ	729	13534.7	296	5321.3	38	276.6	391	2689.8	2	3643.0	2	1604.0
Սյունիք	418	5802.1	141	2451.6	27	59.9	245	2041.9	3	501.5	2	747.2
Վայոց ձոր	138	3962.4	44	3052.6	9	63.4	83	580.3	1	18.9	1	247.2
Տավուշ	658	7599.4	235	1880.4	20	62.5	399	2003.9	2	1219.3	2	2433.3
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>11653</b>	<b>710245.8</b>	<b>4568</b>	<b>372307.1</b>	<b>720</b>	<b>6751.7</b>	<b>6267</b>	<b>63353.4</b>	<b>39</b>	<b>24639.5</b>	<b>59.0</b>	<b>243194.1</b>

ՀՀ մարզերին բնորոշ են ապրանքաշրջանառության տարբեր մակարդակներ: Երևան քաղաքի և ՀՀ մնացած մարզերի ապրանքաշրջանառության մակարդակների տարբերությունները հիմնականում պայմանավորված են առևտրի օբյեկտների քանակով, բնակչության թվաքանակով, ապրանքաշրջանառության կառուցվածքով, նյութատեխնիկական բազայի հագեցվածությամբ, ինչպես նաև բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակի տարբերություններով և արտաքին շուկաներին կապող կոմունիկացիաների տեղաբաշխմամբ:

**Ապրանքաշրջանառության ծավալների տեսակարար կշիռներն ըստ մարզերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին, ընդհանուրի նկատմամբ %**




ՀՀ մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալի 83.9%-ը (595801.6 մլն.դրամ) ապահովել են ք.Երևանի մանրածախ առևտրի գործող օբյեկտները, որը բացատրվում է վերը նշված գործոններով և այն հանգամանքով, որ հանրապետության մի շարք մարզերի (հիմնականում ք.Երևանին մոտ գտնվող մարզերի) բնակչությունն ապրանքների ձեռքբերման պահանջարկի մի մասը բավարարում է նաև ք.Երևանի առևտրի օբյեկտներում:

ՀՀ մանրածախ առևտրում պահպանվել է խանութների միջոցով իրականացվող առևտրի գերակայության միտումը: Ընդ որում, 2003թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի 52.4%-ը (372307.1 մլն.դրամ) ձևավորվել է խանութների միջոցով: 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ այդ ցուցանիշը, համադրելի գներով, կազմել է 121.1%: Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, հանրապետությունում գործող խանութների 47.5%-ը մասնագիտացված է պարենային ապրանքների, 42.6%-ը՝ ոչ պարենային և 9.9%-ը՝ խառը ապրանքների վաճառքով:

Խանութների քանակի բաշխվածությունը (պարենային, ոչ պարենային, խառը) մարզերով, 2003. հունվար-դեկտեմբերին

(ընդհանուրի նկատմամբ, %)




**Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին**

	Խանութների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Մանրածախ ապրանքաշրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>4568</b>	<b>17716</b>	<b>372307.1</b>	<b>100.0</b>
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)	3932	7474	84415.1	22.7
6-15 մարդ (փոքր)	502	4308	75775.3	20.3
16-30 մարդ (միջին)	82	1766	49915.2	13.4
31 և ավելի մարդ (խոշոր)	52	4168	162201.5	43.6

Վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված խանութների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր խանութները՝ 86.1%: Հարկ է նշել, որ դրանց ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 22.7%, այն դեպքում երբ խանութների ընդհանուր քանակում 1.1%-ը կազմող խոշոր խանութների միջոցով իրականացված ապրանքաշրջանառության ծավալը կազմել է՝ 43.6%:

**Խանութների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին, %**



**Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ՀՀ մարզերով, 2003թ. հունվար-դեկտեմբերին<sup>1</sup>**

	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	318753.5	53515.0	16.8	65761.6	20.6	44965.8	14.1	154511.1	48.5
Արագածոտն	4747.4	2579.5	54.3	2167.9	45.7	-	-	-	-
Արարատ	4434.6	3571.4	80.5	797.6	18.0	38.1	0.9	27.5	0.6
Արմավիր	3744.8	2197.7	58.7	676.0	18.1	496.1	13.2	375.0	10.0
Գեղարքունիք	2745.2	2171.6	79.1	449.9	16.4	123.7	4.5	-	-
Լոռի	9373.3	6260.1	66.8	2240.4	23.9	256.9	2.7	615.9	6.6
Կոտայք	15802.4	5399.6	34.2	293.1	1.8	3437.7	21.8	6672.0	42.2
Շիրակ	5321.3	3458.5	65.0	1327.0	24.9	535.8	10.1	-	-
Սյունիք	2451.6	1669.3	68.1	782.3	31.9	-	-	-	-

<sup>1</sup> Խանութների քանակն ըստ մարզերի ներկայացված է “Հետաքրքրաշարժ վիճակագրության” հավելվածում:


	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
Վայոց ձոր	3052.6	2051.9	67.2	1000.7	32.8	-	-	-	-
Տավուշ	1880.4	1540.5	81.9	278.8	14.9	61.1	3.2	-	-
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>372307.1</b>	<b>84415.1</b>	<b>22.7</b>	<b>75775.3</b>	<b>20.3</b>	<b>49915.2</b>	<b>13.4</b>	<b>162201.5</b>	<b>43.6</b>

**Հանրային սննդի գործող օբյեկտների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին**

	Օբյեկտների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Մանրածախ ապրանքաշրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>720</b>	<b>3828</b>	<b>6751.7</b>	<b>100.0</b>
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)	542	1287	1909.6	28.3
6-15 մարդ (փոքր)	137	1158	1872.8	27.7
16-30 մարդ (միջին)	28	618	1236.4	18.3
31 և ավելի մարդ (խոշոր)	13	765	1732.9	25.7

Վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված հանրային սննդի գործող օբյեկտների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքրերը՝ 75.3%, իսկ դրանց ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 28.3 %:

**Հանրային սննդի գործող օբյեկտների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին, %**



**Հանրային սննդի գործող օբյեկտների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության**

**Ժամական ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ՀՀ մարզերով, 2003թ. հունվար-դեկտեմբերին<sup>1</sup>**

Մարզեր	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	5120.5	1062.1	20.7	1452.1	28.4	924.7	18.1	1681.6	32.8
Արագածոտն	213.1	45.4	21.3	167.7	78.7	-	-	-	-
Արարատ	201.1	131.6	65.4	-	-	69.5	34.6	-	-
Արմավիր	134.5	72.1	53.6	62.4	46.4	-	-	-	-
Գեղարքունիք	60.2	46.0	76.4	14.2	23.6	-	-	-	-
Լոռի	142.4	81.9	57.5	60.5	42.5	-	-	-	-
Կոտայք	417.5	165.0	39.5	53.1	12.7	148.1	35.5	51.3	12.3
Շիրակ	276.6	139.2	50.3	43.3	15.7	94.1	34.0	-	-
Սյունիք	59.9	40.4	67.4	19.5	32.6	-	-	-	-
Վայոց ձոր	63.4	63.4	100.0	-	-	-	-	-	-
Տավուշ	62.5	62.5	100.0	-	-	-	-	-	-
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>6751.7</b>	<b>1909.6</b>	<b>28.3</b>	<b>1872.8</b>	<b>27.7</b>	<b>1236.4</b>	<b>18.3</b>	<b>1732.9</b>	<b>25.7</b>

Կրպակների ապրանքաշրջանառության ծավալը 2003թ. հունվար-դեկտեմբերին, ընթացիկ գներով, կազմել է 63353.4 մլն. դրամ, որը 2002թ. համապատասխան ժամանակաշրջանի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 78.8%: 2003թ. գործած 6267 կրպակների ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի դասվում է գերփոքրերի (մինչև 5 մարդ) խմբին:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2003թ. հունվար-դեկտեմբերին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 243194.1 մլն. դրամ, որը 2002թ. համապատասխան ժամանակաշրջանի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 121.7%:

**ՀՀ սպառողական ապրանքների շուկաների քանակը և ապրանքաշրջանառության ծավալները ըստ մարզերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին**


Մարզեր	Շուկաների քանակը	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում` ընդհանուրի նկատմամբ, %	
			պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	20	221073.4	11.0	89.0
Արագածոտն	3	274.3	-	100.0
Արարատ	4	1430.6	5.2	94.8
Արմավիր	3	4228.6	18.8	81.2
Գեղարքունիք	8	1812.4	15.6	84.4
Լոռի	4	5662.7	53.7	46.3
Կոտայք	10	3680.4	19.3	80.7
Շիրակ	2	1604.0	-	100.0
Սյունիք	2	747.2	18.9	81.1
Վայոց ձոր	1	247.2	-	100.0
Տավուշ	2	2433.3	31.9	68.1
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>59</b>	<b>243194.1</b>	<b>12.6</b>	<b>87.4</b>

<sup>1</sup> Հանրային սննդի գործող օբյեկտների քանակն ըստ մարզերի ներկայացված է «Դեղատարբրաշարժ վիճակագրություն» հավելվածում:



Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Մասնավորապես, 59 սպառողական ապրանքների շուկաներից 41-ը՝ ոչ պարենային ապրանքների վաճառքով մասնագիտացված շուկաներն են: Ընդ որում, ք. Երևանի 20 շուկաներից՝ 14-ը, Գեղարքունիքի մարզում 8-ից՝ 6-ը, Լոռու մարզում 4-ից՝ 3-ը, Կոտայքի մարզում՝ 10-ից 5-ը, Արագածոտնի, Շիրակի և Վայոց ձորի մարզերում գործող սպառողական ապրանքների շուկաները մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Դրանով է պայմանավորված հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալում ոչ պարենային ապրանքների ապրանքաշրջանառության մեծ տեսակարար կշիռը, որը կազմել է 87.4%:

**ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը ըստ Երևան քաղաքի և մնացած մարզերի (ամփոփ), 2003թ. հունվար-դեկտեմբերին**  
(ընդհանուրի նկատմամբ, %)




2003թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում ք.Երևանի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը տատանվել է I եռամսյակի 91.1% -ից մինչև IV եռամսյակի 90.0%-ը:

**Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին**

	Շուկաների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Ապրանքաշրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>59</b>	<b>707</b>	<b>243194.1</b>	<b>100.0</b>
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)	32	90	22543.4	9.3
6-15 մարդ (փոքր)	18	165	51271.8	21.1
16-30 մարդ (միջին)	5	114	16645.3	6.8
31 և ավելի մարդ (խոշոր)	4	338	152733.6	62.8

Սպառողական ապրանքների շուկաներում վարձակալական հիմունքներով առևտուր իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակն ունի հետևյալ բաշխվածությունը. գերփոքր՝ 1182, փոքր՝ 2211, միջին՝ 1025 և խոշոր՝ 3480 մարդ:

Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին, %



Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ՀՀ մարզերով, 2003թ. հունվար-դեկտեմբերին<sup>1</sup>

	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	221073.4	16234.9	7.3	43522.9	19.7	8582.0	3.9	152733.6	69.1
Արագածոտն	274.3	274.3	100.0	-	-	-	-	-	-
Արարատ	1430.6	1075.3	75.2	355.3	24.8	-	-	-	-
Արմավիր	4228.6	-	-	1332.4	31.5	2896.2	68.5	-	-
Գեղարքունիք	1812.4	560.0	30.9	589.8	32.5	662.6	36.6	-	-
Լոռի	5662.7	1251.0	22.1	1050.8	18.6	3360.9	59.3	-	-
Կոտայք	3680.4	2832.1	77.0	848.3	23.0	-	-	-	-
Շիրակ	1604.0	68.6	4.3	1535.4	95.7	-	-	-	-
Սյունիք	747.2	-	-	747.2	100.0	-	-	-	-
Վայոց ձոր	247.2	247.2	100.0	-	-	-	-	-	-
Տավուշ	2433.3	-	-	1289.7	53.0	1143.6	47.0	-	-
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>243194.1</b>	<b>22543.4</b>	<b>9.3</b>	<b>51271.8</b>	<b>21.1</b>	<b>16645.3</b>	<b>6.8</b>	<b>152733.6</b>	<b>62.8</b>

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: 2003թ. հունվար-դեկտեմբերին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 3.5% կամ 24639.5 մլն. դրամը<sup>2</sup>:

<sup>1</sup> Սպառողական ապրանքների շուկաների քանակն ըստ մարզերի ներկայացված է «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» հավելվածում:

<sup>2</sup> Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպված շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

**Մանրածախ շուկայի համեմատական ակտիվությունը ըստ մարզերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին**

Մարզեր	Բնակչության միջին թվաքանակը 2003թ. հունվար-դեկտեմբերին, հազ. մարդ	Ապրանքաշրջա-նա-ռությունը 2003թ. հունվար-դեկտեմբերին, մլն. դրամ	Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ապրանքաշրջա-նառությունը, դրամ	Մեկ բնակչին ընկնող ապրանքաշրջա-նառության միջին նկատմամբ, % <sup>1</sup>
Արագածոտն	138.7	6114.8	44086.5	19.9
Արարատ	272.4	7419.4	27237.2	12.3
Արմավիր	277.1	13424.4	48446.0	21.9
Գեղարքունիք	238.2	6992.5	29355.6	13.3
Լոռի	284.7	21910.3	76959.3	34.8
Կոտայք	272.8	27684.2	101481.7	45.9
Շիրակ	282.4	13534.7	47927.4	21.7
Սյունիք	152.9	5802.1	37947.0	17.2
Վայոց ձոր	55.8	3962.4	71010.8	32.1
Տավուշ	134.4	7599.4	56543.2	25.6
ք.Երևան	1101.9	595801.6	540703.9	244.5
Ընդամենը ՀՀ	3211.3	710245.8	221170.8	x

2003թ. հունվար-դեկտեմբերին պահպանվել է 2002թ. նույն ժամանակաշրջանում արձանագրված ք.Երևանի մանրածախ շուկայի գերակայության միտումը ՀՀ մյուս մարզերի նկատմամբ: Այսպես, ք.Երևանի մանրածախ շուկայի ծավալը 2003թ. 2.4 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը: Մնացած մարզերի մանրածախ շուկայի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ հիմնականում տատանվել է 12.3–45.9% միջակայքում:

**Ապրանքային պաշարների փոփոխությունը մանրածախ առևտրում և դրանց ապահովվածությունը օրերով, 2003թ. հունվար-դեկտեմբերին**

Ամիսներ	Ապրանքային պաշարներ, մլն. դրամ	Ապրանքային պաշարների ապահովվածությունը օրերով
2002թ. հունվարի 1-ի դրությամբ	30500.8	35
Փետրվարի 1-ի դրությամբ	33643.0	71
Մարտի 1-ի դրությամբ	35234.1	67
Ապրիլի 1-ի դրությամբ	32951.3	52
I եռամսյակի միջինը	33534.4	57
Մայիսի 1-ի դրությամբ	35807.6	54
Հունիսի 1-ի դրությամբ	37948.5	52
Հուլիսի 1-ի դրությամբ	41167.1	55
II եռամսյակի միջինը	37035.6	53
Օգոստոսի 1-ի դրությամբ	40604.3	51
Սեպտեմբերի 1-ի դրությամբ	42022.0	53
Հոկտեմբերի 1-ի դրությամբ	42623.0	48
III եռամսյակի միջինը	41523.8	52
Նոյեմբերի 1-ի դրությամբ	41151.9	44
Դեկտեմբերի 1-ի դրությամբ	42059.2	48
2003թ. հունվարի 1-ի դրությամբ	41850.5	44
IV եռամսյակի միջինը	41816.0	46

2004թ. հունվարի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները հանրապետության մանրածախ առևտրի գործող օբյեկտներում կազմել են 41850.5 մլն. դրամ, իսկ ապրանքային պաշարներով ապահովվածությունը՝ 44 օր:

<sup>1</sup> Այս ցուցանիշի մշակումը հնարավորություն կտա տարեկան կտրվածքով վարելու ըստ մարզերի, հետագայում նաև ըստ բնակավայրերի, շուկաների բևեռացվածության (աճի կամ մարման) միտումների մոնիթորինգը:

**Մանրածախ առևտրի գործող օբյեկտների ապրանքային պաշարները  
և դրանց ապահովվածությունն (օրերով) ըստ մարզերի, 2004թ. հունվարի 1-ի դրությամբ**

	Ընդամենը ՀՀ	այդ թվում										
		ք.երեվան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
Ապրանքային պաշարները, մլն. դրամ	41850.5	37093.2	121.7	394.2	190.1	426.3	820.4	1125.5	947.2	286.3	180.7	264.9
Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով	44	44	14	57	40	68	48	31	55	41	54	54

Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով հանրապետության միջինից ցածր է Արագածոտնի (14 օր), Կոտայքի (31 օր), Արմավիրի (40 օր) և Սյունիքի (41 օր) մարզերում: Մյուս մարզերում (բացառությամբ ք. Երևանի) ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով բարձր է հանրապետության միջինից, որն այդ մարզերում ապրանքների իրացման դանդաղ տեմպերի արդյունք է: